ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«11» հունվարի 2019թ.**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ Ա. Մեսրոպյան:

Հանձնաժողովի անդամներ ՝
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Ծատուրյան:
ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ՝ Գ. Բոյաջյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ-ի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիր/: Հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվեց մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրվեց հետևյալը. հավելված 3-ում նշված տեխնիկական բնութագիրը հստակ և մանրամասն չի նկարագրում ձեռքբերվող ապրանքը, իսկ ապրանքի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Կասեցնել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով հայտերի գնահատման նիստը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետը՝ ծանուցել «Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
2) Հայտերի գնահատման նիստը շարունակել 15.01.2019թ.-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Ծատուրյան**

_____ **Գ. Բոյաջյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Եղիազարյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/1

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«15» հունվարի 2019թ.**
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ Ա. Մեսրոպյան:

Հանձնաժողովի անդամներ՝
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Ծատուրյան:
Բացակայում էր
ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ՝ Գ. Բոյաջյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
Սահմանված ժամկետում Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի կողմից ներկայացվել է պահանջվող փաստաթուղթը, սակայն գնահատող հանձնաժողովի անդամների կողմից արձանագրվեց, որ գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի հայտը գնահատել անբավարար և մերժել:
2) ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:
3) Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացկարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:
4) Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի տվյալները և ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը ուղարկել ֆինանսների նախարարություն՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ սկսելու նպատակով

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- **Հ. Ծատուրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- **Ա. Եղիազարյան**